

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության
վարչության նիստի

ք. Երևան

25 սեպտեմբերի 2019թ.

Մասնակիցների ցուցակ՝

- | | |
|-----------------|-------------------|
| 1. Ա.Ալեքսանյան | 8. Կ.Հովհաննիսյան |
| 2. Լ.Գալստյան | 9. Ի.Մկրտումյան |
| 3. Ք.Գյոնջյան | 10. Ա.Մուրադյան |
| 4. Ա.Խաչատրյան | 11. Ա.Ներսիսյան |
| 5. Մ.Խաչատրյան | 12. Գ.Սադյան |
| 6. Ա.Կարախանյան | 13. Ս.Վարդանյան |
| 7. Ք.Հակոբյան | 14. Ա.Վերդյան |

Նիստի սկզբում նիստի նախագահող ընտրվեց պարոն Ի. Մկրտումյանը, քարտուղար՝ տիկին Ա. Կարախանյանը: Նախագահողը տեղեկացրեց, որ նիստն իրավազոր է և առաջարկեց հաստատել օրակարգը: Օրակարգի վերաբերյալ ներկայացվեցին առաջարկություններ: Արդյունքում, հաստատվեց հետևյալ օրակարգը՝

Օրակարգ՝

1. «.am» դոմենային անունների տիրույթի 25-ամյակին նվիրված տոնական միջոցառումների համար գումար հատկացնելու մասին
2. Մի շարք անձանց «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությանն անդամագրելու մասին
3. Տեխնիկական հարցերով աշխատանքային խմբի առաջարկությունների մասին
4. «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լուծարման առաջարկության մասին

1. «.am» դոմենային անունների տիրույթի 25-ամյակին նվիրված տոնական միջոցառումների համար գումար հատկացնելու մասին

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ տիկին Լ.Գալստյանը՝ նշելով, որ այս տարի լրանում է «.am» դոմենային անունների տիրույթի 25-ամյակը և ներկայացնելով այդ կապակցությամբ նախատեսվող տոնական միջոցառումների ցանկը, միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ծախսերը: Տիկին Գալստյանը նշեց նաև, որ համաձայն «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի կանոնադրության՝ կազմակերպության

վարչությունն է տնօրինում կազմակերպության՝ մեկ միլիոն ՀՀ դրամը գերազանցող արժողությամբ գույքը: Ծավալված քննարկման արդյունքում, «.am» դոմենային անունների տիրույթի 25-ամյակին նվիրված տոնական միջոցառումների համար, միաձայն որոշվեց հատկացնել հինգ միլիոն ՀՀ դրամ:

Որոշում՝ «.am» դոմենային անունների տիրույթի 25-ամյակին նվիրված տոնական միջոցառումների համար հատկացնել հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Մի շարք անձանց «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությանն անդամագրելու մասին

Կազմակերպության վարչության անդամները տեղեկացվեցին, որ կազմակերպությունը 31 անձանցից (անձանց ցանկը կցվում է) ստացել է դիմումներ՝ կազմակերպությանն անդամագրվելու խնդրանքով: Նշված անձանց վերաբերյալ տեղեկություններ ներկայացվելուց հետո՝ առաջարկություն հնչեց բավարարել ստացված դիմումները: Առաջարկը դրվեց քվեարկության և միաձայն ընդունվեց:

Որոշում՝ Բավարարել Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն հայտնած 31 անձանց (ցանկը կցվում է) դիմումները և ընդունել նրանց որպես «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամ:

3. Տեխնիկական հարցերով աշխատանքային խմբի առաջարկությունների մասին

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցան «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի վարչության անդամ հանդիսացող՝ սերվերների գնման և AMNIC-ի ծրագրային ապահովման վերազինման նպատակահարմարությունն ուսումնասիրելու և եզրակացություն տալու նպատակով ստեղծված տեխնիկական հարցերով աշխատանքային խմբի մի շարք անդամներ, որոնք ներկայացրեցին աշխատանքային խմբի առաջարկությունները:

Հարցի վերաբերյալ ծավալվեց քննարկում: Քննարկման ընթացքում առաջարկվեց պարոն Մ. Խաչատրյանին ղեկավարել տեխնիկական հարցերով աշխատանքային խմբի աշխատանքները, իսկ «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի տնօրեն պարոն Ա.Ներսիսյանին հնարավորություն տալ տեխնիկական հարցերով աշխատանքային խմբի անդամներին ծանոթանալու համապատասխան տեղեկատվությանը և ենթակառուցվածքներին՝ աշխատանքային խմբի անդամների կողմից գաղտնիքի չհրապարակման վերաբերյալ փաստաթուղթ ստորագրելու պայմանով:

Քննարկման արդյունքում 13 կողմ ձայնով (պարոն Գ.Սաղյանը չմասնակցեց քվեարկությանը) որոշվեց ի գիտություն ընդունել տեխնիկական հարցերով աշխատանքային խմբի առաջարկությունները:



Որոշում՝ Ընդունել ի գիտություն սերվերների գնման և AMNIC-ի ծրագրային ապահովման վերազինման նպատակահարմարությունն ուսումնասիրելու և եզրակացություն տալու նպատակով ստեղծված տեխնիկական հարցերով աշխատանքային խմբի առաջարկությունները:

4. «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լուծարման առաջարկության մասին

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ պարոն Ա.Մուրադյանը: Նա նշեց, որ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ գործող օրենքը հնարավորություն է տալիս «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ին անձամբ իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, ինչը թույլ չէր տալիս նախորդ օրենքը և որի պատճառով «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ն հիմնադրել էր «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ն: Պարոն Մուրադյանը նշեց նաև, որ տեսնում է առավելություններ «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի լուծարման և «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի կողմից անձամբ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու դեպքում՝ ծախսերի տնտեսում, թափանցիկության բարձրացում: Ծավալված քննարկման ընթացքում հնչեցին տարբեր կարծիքներ: Քննարկման արդյունքում տրվեց հետևյալ արձանագրային հանձնարարականը՝

Արձանագրային հանձնարարական՝

«Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն պարոն Ա.Ալեքսանյանին՝ «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի տնօրեն պարոն Ա.Ներսիսյանի հետ համատեղ կատարել ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն և ներկայացնել «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի վարչությանը:

| | | |
|------------------|---|---------------|
| Նիստի նախագահող՝ |  | Ի. Մկրտումյան |
| Նիստի քարտուղար՝ |  | Ա. Կարախանյան |